# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Ամման

Նորին Ամեն.
Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեան
Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Հաճոյքը ունիմ փառաւոր տօներուն առիթով ներկայացնելու Ձերդ Ամենապատուութեան սրտագին բարեմաղթութիւններս եւ շնորհաւորութիւններս, խնդրելով Ամենակարող Աստուծմէ որ կրկնուի այս տօնը Ձեզի եւ քրիստոնեայ աշխարհին համար իր բարիքներով, յաջողութեամբ եւ օրհնութիւններով:

ՈՒԱՍՖԻ ԹԷԼԼ
Վարչապետ

---

Ամման

Նորին Ամեն.
Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեան
Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Յարութեան տօնի փառաւոր առիթով, կը ներկայացնեմ Ձերդ Ամենապատուութեան սրտագին բարեմաղթութիւններ եւ լաւագոյն շնորհաւորութիւններ, աղօթելով առ Բարձրեալն Աստուած որ այս երջանիկ տօնը բերէ մարդկութեան բարիք եւ հանութիւն:

ՀԱՊԷՍ ՄԱՃԱԼԻ
Բանակի Ընդհ. Հրամանատար

---

Ամման

Նորին Ամեն.
Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեան
Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Կը շնորհաւորեմ Ձեր տօնը եւ Ձերդ Ամենապատուութեան կը մաղթեմ առողջութիւն եւ երջանկութիւն:

ՊԱՀՃԱԹ ԹԱԼՀՈՒՆԻ

---

Լիզպոն

Նորին Ամեն.
Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեան
Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Խորապէս զգացուած Ձերդ Ամենապատուութեան զատկական շնորհաւորութիւններէն եւ օրհնութիւններէն, կը յայտնենք Մեր անկեղծ շնորհակալութիւնները:

ԱԶԵՐԷՏՕ Բ ՐՏԻԿԱՕ
ԳԷՈՐԳ ԷՍԱՅԵԱՆ
ՌՕՊԷՐ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ

---

Ամման

Նորին Ամեն.
Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեան
Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Կը յայտնեմ իմ շնորհակալութիւններս Գուրպան պայրամի առթիւ Ձեր բրած ազնիւ շնորհաւորութիւններուն համար: Կ'աղօթեմ Բարձրեալին Աստուծոյ որ մեր բոլորին շնորհէ բարգաւաճութիւն, ծառայելու համար մեր սիրելի Հայրենիքին, ընդ հովանեաւ մեր վերագոյն առաջնորդ Մեծն Հիւսէյնի:

ԶՕՐԱՎԱՐ ՀԱՊԷՍ ՄԱՃԱԼԻ

---

Երուսաղէմ, 14 Մայիս 1912

Ն. Վեհ. Հիւսէյն Թագաւոր
Արքունի Պալատ
Ամման

Իմ անունովս եւ յանուն Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Յորդանանի հայ համայնքին, կը մատուցանեմ Ձերդ Վեհափառութեան ջերմ շնորհաւորութիւններ Գուրպան պայրամի առթիւ, մեծապէս հաւատարմութեամբ հանդերձ:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայոց Երուսաղէմի

---

Երուսաղէմ, 14 Մայիս 1962

Ն. Վսեմ. Ուասֆի Թէլլ
Վարչապետ Յորդանանի
Ամման

Իմ անունովս եւ յանուն Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Յորդանանի հայ համայնքին, կը ներկայացնեմ Ձերդ Վսեմութեան սրտագին շնորհաւորութիւններ Գուրպան պայրամի առթիւ, եւ կ'աղօթեմ Ամենակարողին Աստուծոյ պարգեւելու Ձեզ ոյժ եւ կարողութիւն, որպէսզի կարող ըլլաք Ձեր ուսերուն վրայ ծանրացող պարտականութիւնները կատարել յօգուտ մեր սիրելի Յորդանանին եւ անոր ժողովուրդին, Վեհ.

digitised by A.R.A.R.@

Թագաւոր Հիւսէյն Մեծի իմաստուն առաջնորդութեան ներքեւ։

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայոց Երուսաղէմի

---

Երուսաղէմ, 14 Մայիս 1962

Ն. Վսեմ. Հաբէս Մաճալի
Ընդհ. Հրամանատար Յորդանանեան Զօրաց
Ամման

Իմ անունովս եւ յանուն Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան, կը շնորհաւորեմ Ձեզ Գուրպան պայրամի առթիւ, եւ կը մաղթեմ Ձեզ բարօրութիւն եւ արեւշատութիւն, ընդ նմին եւ Ն. Վեհ. Թագաւորին։

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայոց Երուսաղէմի

---

Երուսաղէմ, 14 Մայիս 1962

Ն. Վսեմ. Պահճաթ Թալհունի
Ամման

Իմ անունովս եւ յանուն Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի, կը յայտնեմ Ձեզ անկեղծ շնորհաւորութիւններ Գուրպան պայրամի հայցելով Բարձրեալն Աստուծմէ որ շնորհէ Ձեզ երկար եւ երջանիկ տարիներ, յաջողութիւն եւ բարօրութիւն։

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայոց Երուսաղէմի

---

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ – ԲԵՄԱԿԱՆՔ

● Կիր. 1 Ապրիլ. — Տնտեսին։ *Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ խորանին վրայ։ Պատարագիչն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զվչանեան։*

● Եշ. 5 Ապրիլ. — *Իրիկուան* Հսկումին *քարոզեց Հոգշ. Տ. Մաշտոց Վրդ. Բարիկուեան, շեշտելով Սիրոյ դերը մեր կեանքերէն ներս։*

● Շբ. 7 Ապրիլ. — *Կէսօրէ վերջ, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար։ Ս. Գերեզմանի և Գիւտ Խաչի այրի ուխտերէն ետք, վերջինիս կից՝ Ս. Գր. Լուսաւորչի եկեղեցւոյ մէջ պաշտուեցան ժամերգութիւն և նախատօնակ։ Ապա կատարուեցաւ Տնօրինական Ս. Տեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս։ Թափօրապետն էր Հոգշ. Տ. Շահէ Վրդ. Աճէմեան։*

● Կիր. 8 Ապրիլ. — Դատաւորին։ *Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Լուսաւորիչ։ Ապա Ամեն. Ս. Պատրիարք Հայրը հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, որմէ ետք նախագահեց նոյնին և Պատարագամատոյցին շուրջ կատարուած եռադարձ մեծահանդէս թափօրին՝ որ վերջացաւ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ։ Ս. Պատարագէն մաս մը ձայնասփռուեցաւ Յորդանանի ռատիոկայանէն։*

● Ուր. 13 Ապրիլ. — *Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Լուսարարապետ Տ. Հայրիկ Եպիսկոպոս։*

● Շբ. 14 Ապրիլ. — Ս. Գրիգորի Լուսաւորչին (Մուտն ի վիրապ)։ *Ըստ սովորութեան առաւօտեան ժամերգութիւնէն ետք, Ս. Գր. Լուսաւորչի մասունքը իր հանգստարանէն թափօրով փոխադրուեցաւ Աւագ Սեղան՝ ձեռամբ Լուսարարապետ Սրբազանին։ Ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ՝ Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսաւորչի սեղանին վրայ։ Պատարագիչն էր Հոգշ. Տ. Վահրիճ Վրդ. Գազանճեան։*

— *Կէսօրէ վերջ, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Սրբազանի գլխաւորութեամբ, Միաբանութենէն մաս մը մեկնեցաւ Զիթենեաց լեռ, ուր Համբարձման Սրբավայրին վրայ կանգնուած մեր վրանատան մէջ պաշտուեցան ժամերգութիւն և Նախատօնակ։ Իրիկնադէմին կատարուեցան նաև «Ննջեցելոց» և* Հսկման *կարգեր, ու ապա՝ առաւօտեան ժամերգութիւն։ Մատուցուեցաւ նաև Ս. Պատարագ։ Պատարագիչն էր Հոգշ. Տ. Վաչէ Վրդ. Իգնատիոսեան։ Արարողութիւնները աւարտեցան ուշ գիշերին։*

● Կիր. 15 Ապրիլ. — Գալստեան։ *Առաւօտեան ժամը 8ին, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժերով մեկնեցաւ Զիթենեաց լեռ ու «Հրաշափառ»ով մուտք գործեց Համբարձման Սրբավայրը, ուր մեր վրանատան մէջ եպիսկոպոսական խոյր ի գլուխ պատարագեց և աւուր պատշաճի քարոզեց Հոգշ. Տ. Շահէ Վրդ. Աճէմեան։ Թէ՛ երէկ երեկոյ և թէ այսօր զգալի էր հաւատացեալներու պակասը՝ աննպաստ օդի պատճառաւ։*

● Եշ. 19 Ապրիլ. — *Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Արեւագալ»ի վերջին ժամերգութիւնը։*

— *Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ վերջին «Խաղաղական» ժամերգութիւնը, որուն աւարտին պաշտուեցաւ Ս. Կոյսի Աւետման հանդիսաւոր Նախատօնակը՝ նախագահութեամբ Գերշ. Տ. Սուրէն Արքեպիսկոպոսի։*

digitised by A.R.A.R.@

● Ուր. 20 Ապրիլ. — Աւետումն Ս. Աստուածածնի: Առաւօտեան ժամը 8ին, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Քէմհաճեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց և քարոզեց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը, բնաբան ունենալով «Ուրախ լե՛ր, բերկրեալդ, Տէր ընդ քեզ» (Ղկ. Ա. 28).

● Շբ. 21 Ապրիլ. — Յիշատակ յարութեան Ղազարու: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր. ժամարարն էր Հոգշ. Տ. Արշակ Աբեղայ Խաչատուրեան. Ս. Թարգմանչաց Վարժարանի ուսանողութիւնը առաւ Ս. Հաղորդութիւն.

— Կէսօրէ վերջ, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար. Ս. Գերեզմանի ուխտէն ետք, մեր վերնամատրան մէջ պաշտուեցան ժամերգութիւն և Ծաղկազարդի նախատօնակ, ի ներկայութեան ուխտաւորներու խուռն բազմութեան. Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս. Թափօրապետն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան.

● Կիր. 22 Ապրիլ. — Ծաղկազարդ: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան և, կարճ դադարէ մը ետք, Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մատրան մէջ. ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Արղ. Պատուէրեան. Ապա, ժամը 11.30ին, կատարուեցաւ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին և Պատանատեղւոյն շուրջ և «Անստասն»՝ գլխաւորութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր. Թափօրականք ի ձեռին ունէին ձիթենեաց և արմաւենեաց ոստեր. իսկ մեր թափօրին կը հետևէին, ըստ իրաւական սովորութեան, Ղպտոց և Ասորւոց թափօրները, նմանապէս ոստովք ձիթենեօք և արմաւենեօք: Ծանրաքայլ այս թափօրը տևեց մօտ երկու ժամ. ժամը 1.30ին, Միաբանութիւնը վերադարձաւ Մայրավանք և Հայոց Թաղի մուտքէն «Որ զխորհուրդ» շարականը երգելով բարձրացաւ Պատրիարքարան.

— Կէսօրէ վերջ, շքեղօրէն զարդարուած Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ նախ «Անդաստան», Ամեն. Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ, և ապա երեկոյեան ժամերգութիւն, ընդմիջուած ամենին յատուկ հոգեզմայլ շարականներով, և «Դռնբացէք»ի հոգեպարար արարողութիւնը, նախագահութեամբ Գերշ. Տ. Սուրէն Սրբազանի: Այս առթիւ, Հոգշ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան կարդաց վարագոյրներու բացման մասնակցող բարեպաշտ ուխտաւորներու անուանացանկը, և կոչ ըրաւ ներկաներուն որ իրենց լումաներով նպաստեն Ազունիէի Թոքախտաբուժարանին մէջ դարմանուող իրենց եղբայր-քոյրերուն: Այդ նպատակով, եկեղեցւոյ բոլոր մուտքերուն դրուած էին անօթներ.

● Գշ. 24 Ապրիլ. — Աւագ Երեքշաբթի: Ըստ սովորութեան, Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յովհաննէս Աւետարանչի հայապատկան մատրան մէջ, Ս. Յարութեան Տաճարի գաւիթը. ժամարարն էր Հոգշ. Տ. Վահրիճ Արղ. Գազանճեան. Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան թափօր Տաճարէն ներս. Թափօրը կը գլխաւորէր Հոգշ. Տ. Փառէն Արղ. Աւետիքեան, որ անոր իւրաքանչիւր հանգրուանին բացատրական քարոզներ տուաւ թափօրին հետևող բազմահարիւր ուխտաւորներուն.

● Եշ. 26 Ապրիլ. — Աւագ Հինգշաբթի: Առաւօտեան ժամերգութենէն ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Կարգ Ապաշխարողաց»:

— Ժամը 10ին, հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ. ժամարարն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան, որ կարդաց Ս. Բարսեղ Հայրապետի Հաղորդութեան ձայնը, գերազանցօրէն շինիչ և մեծ խրատներով լի. Բազմահարիւր հաւատացեալներ մօտեցան Հաղորդութեան մեծ խորհուրդին.

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ, Ամեն. Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ, կատարուեցաւ «Ոտնլուայ»ի սրտագրաւ արարողութիւնը. Ներկայ էին բազմաթիւ օտար հրաւիրեալներ, Ս. Քաղաքիս Վեհ. Մուհաֆըզը, պետական և զինուորական դէմքեր, ինչպէս նաև Անգլիքան Գերշ. Արքեպս.ը, որ, ըստ սովորութեան, ոտքերու լուացումէն յետոյ զգեստաւորուելով բարձրացաւ Աւագ խորան, ուրկէ Անգլերէն լեզուով կարդաց Ոտնլուայի վերաբերեալ Աւետարանական համարները.

Ժամը 5ին, փոքր թափօր մը այցելեց Ս. Հրեշտակապետաց եկեղեցին (Ս. Բանտը Քրիստոսի). Թափօրապետն էր վանուց Տեսուչը՝ Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան, որ, Ս. Ձիթենիի ծառին առջև կատարուած Աւետարանի ընթերցումէն ետք քարոզեց վանքին բակն ու տանիքները լեցնող ժողովուրդին, տալով նաև պատմականը նոյն վանքին.

— Իրիկուան ժամը 7էն մինչև կէս գիշեր, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ «Խաւարման» կարգը՝ տխրագեղեցիկ խորհրդաւորութեամբ. և նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր որ տպաւորիչ քարոզով մը վեր հանեց այդ գիշերուան փրկարար նշանակութիւնը.

● Ուր. 27 Ապրիլ. — Աւագ Ուրբաթ: Կէսօրէ վերջ ժամը 1ին, Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատրան մէջ պաշտուեցաւ «Խաչելութեան կարգը», նախագահութեամբ Հոգշ. Տ. Վաչէ Արղ.ի:

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ հանդիսաւոր «Թաղման կարգը», նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր.

● Շբ. 28 Ապրիլ. — Աւագ Շաբաթ (Ճրագալոյց Ս. Զատկի): Առաւօտեան ժամը 8ին, փոքր թափօր մը, գլխաւորութեամբ Աւագ Թարգման Հոգշ. Տ.

digitised by A.R.A.R.@

Գէորգ Վրդ. Նազարեանի, մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար, կատարելու համար Տաճարի գրաւբացման աւանդական ձեւակերպութիւնները։

— Ժամը 10ին, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար, ուր յաջորդաբար կատարուեցան Լուսաւորչայի հանգիստութիւնն ու յարակից արարողութիւնները։ Ժամը 1ին, Յունաց Ամեն. Ս. Պատրիարքը և մեր Լուսարարը՝ Հոգշ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան, զգեստաւորուած, մտան Ս. Գերեզման, ուրկէ քառորդ մը ետք դուրս ելան զոյգ Նուիրական լոյսը, որով վառ լուցուցին Տաճարէն ներս խռնուած բազմազգի և բազմահազար հաւատացեալներու մոմերը, առնելով ընդհանուր խանդավառութեան մթնոլորտ մը, մինչ ուրախօրէն կը ղօղանջէին յունական և հայկական բոլոր զանգերն ու կոչնակները Տաճարին։ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը մեր վերնատան պատշգամէն Նուիրական լոյսով կ'օրհնէ հաւատացեալները, մինչ Ս. Գերեզմանին շուրջ ընթացք կ'առնէ մեր Թափորը, Տաճարին կամարները թնդացնելով Յարութեան աւետիսը փառաբանող շարականով։ Թափորը կը գլխաւորէր Հոգշ. Լուսարար Հայրը՝ որ կը կրէր Լոյսը եպիսկոպոսական, իսկ մեր Թափորին կը հետեւէին Ղպտոց և Ասորւոց Թափորները։ Ժամը 2.30ին, Միաբանութիւնը շքերթով վերադարձաւ Մայրավանք՝ Դաւթի բերդին գիծով. Ամեն. Ս. Պատրիարքն ու Հոգշ. Լուսարարը զգեստաւորուեցան, մինչ դպիրները սկսան երգել «Քրիստոս յարեաւ» շարականը՝ որով Թափորը մուտք գործեց Մայր Տաճար։

— Ժամ մը ետք, Մայր Տաճարին մէջ կը սկսի Ճրագալոյցի արարողութիւնը, ապա կը մատուցուի Ս. Պատարագ՝ Աւագ Սեղանին վրայ։ Յարութեան որոտաւուչ աւետիսին հետ կը բացուի երկնագոյն ու Նրբաբանուած վարագոյրը Աւագ Խորանին, ի յայտ բերելով բովանդակ շքեղանքը անոր, առաւել փայլ մը զգեցած պատուհաններէն վրան իյնող ոսկի շառայլներուն տակ դէպի մայրամուտ թեքող արեգակին։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Փառէն Արք. Աւետիքեան, Ապա պաշտուեցաւ Ս. Զատկի Նախատօնակը, Նախագահութեամբ Գերշ. Տ. Սուրէն Արքեպիսկ.ի. որմէ ետք «Այսօր յարեաւ» շարականը երգելով Միաբանութիւնը բարձրացաւ Սեղանատուն՝ ընթրիքի։

● Կիր. 29 Ապրիլ. — ԶԱՏԻԿ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ: Գիշերուան ժամը 2ին, Միաբանութիւնը արթուն է արդէն ու քիչ ետք, գլխաւորութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս.ի, լուցեալ լապտերներով կը մեկնի Ս. Յարութեան Տաճար, ուր կը պաշտուի առաւօտեան ժամերգութիւնը, մինչև «Հարց», մեր վերնատան մէջ, Ապա Միաբանութիւնը զգեստաւորուելով կ'իջնէ Ս. Գերեզմանի չրջափակը, ուր կը կատարուի եռապատիկ մեծահանդէս Թափոր նոյնին և Օծմանատեղւոյն շուրջ, իսկ Ս. Գերեզմանի դրան՝ «Անդաստան», Նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազանին. Մեր այս Թափորին ևս կը հետևէին Ղպտոց և Ասորւոց Թափորները։ Առաւօտեան ժամը 6.30ին, Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ. ժամարարն էր Գերշ. Տ. Նորայր Եպս. Պողարեան, որ քարոզեց Յարութեան խորհուրդին շուրջ՝ Զուգակշիռ ընելով Քրիստոսի տառապանքներն և արդի ժամանակներու միջազգայնական քաղաքականութեանց. առաջիններուն գալած անհամեմատօրէն մեծ յաղթութիւնները վերագրելով առաջիններուն Քրիստոսի յարութեան խնկակն փթթներուն եղած ըլլալու հանգամանքին։ Քրիստոնէութեան յաղթանակը, եզրակացուց Սրբազանը, մեծագոյն գրաւականն է Քրիստոսի յարութեան։ Բազմահազար հաւատացեալներ մասնակցեցան Հաղորդութեան մեծ խորհուրդին։ Ժամը 9.30ին, Միաբանութիւնը վերադարձաւ Մայրավանք և Հայոց Թաղի մէջէն «Այսօր յարեաւ» և «Քրիստոս յարեաւ» շարականները երգելով բարձրացաւ Պատրիարքարան, ուր Ամեն. Ս. Պատրիարքը Յարութեան աւետիսով ողջունեց ժողովուրդը։

— Կէսօրէ վերջ, Մայրավանքի մեծ բակին մէջ կատարուեցաւ Զատկական մեծ «Անդաստանը», հանդիսապետութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր։

● Բշ. 30 Ապրիլ. — Յիշատակ մեռելոց: Ամեն. Ս. Պատրիարք Հայրը հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ, քարոզեց՝ «Շօշափեցէք զիս և տեսէք, զի ոգի մարմին և ոսկերս ոչ ունի» (Ղկս ԻԴ. 39) բնաբանով, ողջերթի խօսքեր ևս ուղղելով ուխտաւորներուն, և Ս. Պատարագէն ետք ամպհովանիի տակ, Կենաց Փայտի մասունքն ի ձեռին, Նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած եռապատիկ մեծահանդէս Թափորին։ Ս. Պատարագի երգեցողութիւնները կատարուեցան երէկ ու խոստովանաբար իմանալուլէն Ս. Քաղաք ժամանած Ամերիկեան Երգչախումբի անդամներուն կողմէ։ Արարողութեանց աւարտին, Յարութեան շարականներու երգեցողութեամբ, Միաբանութիւնն և ժողովուրդ բարձրացան Պատրիարքարան, ուր Ամեն. Ս. Պատրիարքը իր օրհնութիւնը տալէ ետք բաժնեց բոլորին մէկական Ս. Պատարագի նշխար։

● Գշ. 1 Մայիս. — Գ. օր Ս. Զատկի: Ըստ սովորութեան, Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Վաչէ Աբեղայ Իգնատիոսեան։ Ապա Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս.ի Նախագահութեամբ, կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ Խնդրամատոյց ուխտաւորաց Ննջեցեալներու հոգիներուն համար։

● Շբ. 5 Մայիս. — Գլխատումն Ս. Յովհաննու Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի խորանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Կամիտաս Աբղ. Պասուէրեան։

● Կիր. 6 Մայիս. — Նոր Կիրակի (Յիշատակ բիւրաւոր Տաճարակացն մերոց): Ըստ սովորութեան, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց

digitised by A.R.A.R.@

լուսահոգ Հոգշ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան։ Քարոզեց Հոգշ. Տ. Շահէ Վրդ. Աճէմեան, բնաբան ունենալով Առաքեալին խօսքը, «Իսկ արդ որ ննջեցինն ի Քրիստոս՝ կորեա՞ն արդեօք» (Ա. Կորն. ԺԵ. 18), անդրադառնալով մեծ եղեռնի մեր մէկ միլիոն զոհերուն և յայտնելով թէ ինչպէս որ Վարդանանց մարտիկներուն իբրև նշանաբան ընդունուած ասութիւնն է ըսել թէ անոնք ինկան սիրոյն կրօնի և փառաց հայրենեաց, նոյնպէս ալ Ա. Աշխարհամարտի նահատակներուն համար պարտ է ըսել թէ ինկան սիրոյն եկեղեցւոյս։ Ս. Պատարագէն ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց նախ Մայր Տաճարին մէջ՝ Ապրիլեան նահատակաց հոգիներուն համար, և ապա Տաճարի գաւիթը՝ Երանաշնորհ Տ. Կիւրեղ Բ. Պատրիարքի շիրմին մօտ կատարուած հոգեհանգստեան պաշտամունքներուն։ Սպաս. Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Քէմհաճեանի գլխաւորութեամբ, Թափօրը մեկնեցաւ Զամ-Թաղի գերեզմանատունը, անդ կատարելու համար նոյն արարողութիւնը։

● Եր. 12 Մայիս. — Կէսօրէ վերջ, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը սՀրաշափառով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտօնեցան ժամերգութիւնն ու նախատօնակը՝ մեր վերնատանց մէջ։ Ապա կատարուեցաւ Յերրինական Սրբավայրերու այցելութեան հանդէսը։ Թափօր Տաճարէն ներս։ Թափօրապետն էր Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր։

● Կիր. 13 Մայիս. — Աշխարհամատրան (Կանաչ Կիրակի): Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտօնեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնատանց մէջ։ Ապա Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս., մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, արուն աւարտին նախագահեց Սրբավայրին շուրջ կատարուած «Անդաստան»ին։

● Կիր. 20 Մայիս. — Կարմիր Կիրակի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատանց մէջ։ Պատարագիչն էր Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր։

● Կիր. 27 Մայիս. — Տօն Երեւման Ս. Խաչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Արշակ Արք. Խաչատուրեան։ Քարոզեց Գերշ. Տ. Նորայր Եպս. Պողարեան, բնաբան ունենալով «Ի տան Հօր իմոյ պարտ է իմ լինել» (Ղկս. Բ. 49)։ Խօսեցաւ Աստուծոյ Տան պաշտօնեաներու ուրին ծանրացող յատուկ էական պարտականութեանց մասին և անդրադարձաւ նաև օրուան տօնին խորհուրդին շուրջ։ Կարդացուեցաւ Կիւրեղ Հայրապետի առ Կոստանդ Կայսր ուղղած Թուղթը, Ս. Խաչի հրաշալի երևումին առթիւ։ Աւագ Խորանին վրայ դրուած էր կանթեղներով զարդարուն Ս. Խաչին նշանը։ Քարոզը և Ս. Պատարագէն մաս մը ձայնասփռուեցան Յորդանանի ռատիոկայանէն։

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

● Բշ. 2 Ապրիլ. — Քաղաքիս նորընտիր Կառավարիչ Վսեմ. Անուար Նուսէյպէ, ընկերակցութեամբ Վսեմ. Ոստիկանապետին, իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Պատրիարքարանիս։

● Դշ. 18 Ապրիլ. — Սէյնթ Ճորճ Աստուածաբանական Գոլէճի հիմնարկէքի արարողութեան ներկայ գտնուեցան Հոգշ. Տ. Շահէ Վրդ. Աճէմեան և Տիար Կարապետ Հինդլեան։

● Եշ. 19 Ապրիլ. — Ծերակոյտի անդամ և Երուսաղէմի նախկին Կառավարիչ Վսեմ. Հազեմ էլ-Խէթիպ այցելեց Ամեն. Ս. Պատրիարք Հօր։

● Բշ. 23 Ապրիլ. — Բրիտանական Ընդհ. Հիւպատոսը իր մեկնման առթիւ հրաժեշտի այցելութեան եկաւ Պատրիարքարան։

● Դշ. 24 Ապրիլ. — Եւրոպացւոց Ս. Զատկի տօնին առթիւ, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, ամբողջ Միաբանութիւնը շնորհաւորութեան գնաց Լատինաց Ամ. Ն. Ս. Պատրիարքին և Ֆրանչիսկեանց Գերշ. Կիւսթոսին։ Ապա, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս.ի գլխաւորութեամբ Միաբան Հայրեր այցելեցին Բողոքական Նուիրակին, Անկլիքան Արքեպիսկոպոսին, Արաբ-Անկլիքաններու և Յոյն-Կաթոլիկներու Եպիսկոպոսներուն, Հայ-Կաթոլիկներու և Մարոնիթ համայնքի Միաբանութեանց և Լութերականներու Երէցին։

● Դշ. 25 Ապրիլ — Անթիլիասի Միաբան և Դպրեվանուց Տեսուչ Հոգշ. Տ. Գարեգին Վրդ. Սարգիսեան ուխտաւորաբար ժամանեց Ս. Աթոռ և վերադարձաւ Ս. Զատկի տօներէն ետք։

● Դշ. 1 Մայիս. — Ս. Զատկի տօնին առթիւ, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, ամբողջ Միաբանութիւնը շնորհաւորական այցելութեան գնաց Յունաց Ամեն. Ս. Պատրիարքին։ Ապա, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս.ի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր այցելեցին Ղպտոց, Ասորւոց և Հաբէշոց Եպիսկոպոսներուն։

— Նոյն առթիւ, կ. ա. ժամը 11-12. Պատրիարքարան շնորհաւորական այցելութեան եկան Յունաց և Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքները, Ֆրանչիսկեանց Գերշ. Կիւսթոսը, Ղպտոց, Ասորւոց, Հաբէշոց և Յոյն-Կաթողիկներու Գերշ. Եպիսկոպոսները՝ իրենց Միաբանութեան անդամներով, Անկլիքան Արքեպս.ը և Արաբ-Անկլիքաններու Եպս.ը, Բողոքական Նուիրակը, Հայ-Կաթողիկներու և Մարոնիթ համայնքի Միաբանները, Լութերականներու և Արաբ-Լութերականներու Երէցները և Գերմանիկեան Հայրեր, իսկ պետական և զինուորական դէմքերէն՝ Քաղաքիս Վսեմ. Կառավարիչը, Նոր և Հին Քաղաքի Ոստիկանապետները, Վսեմ. Քաղաքապետը, Ամերիկեան, Անգլիական և Սէուտական Արաբիոյ Հիւպատոսները, բարձրաստիճան սպաներ և այլ ականաւոր անձնաւորութիւններ։

digitised by A.R.A.R.@

— Նոյն օրը, Եգիպտոսէն Ս. Աթոռ վերադարձաւ Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մանուկ, քառասնօրեայ արձակուրդէ մը ետք։

● Դշ. 2 Մայիս. — Ն. Վեհ. Հիւսէյն Թագաւորի Գահակալութեան 9րդ տարեդարձի առթիւ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը իր, Ս. Յակոբեանց Միաբանութեան և Յորդանանի հայութեան անունով շնորհաւորական հեռագիր մը յղեց Ն. Վեհափառութեան։

— Միջ-Եկեղեցական Խորհուրդի անդամ Վեր. Ճոն Վիլքընսընի կողմէ Ամպասատոր պանդոկի մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Հոգշ. Տ. Գեղամ Աբղ. և Տիար Կ. Հինդլեան։

● Եշ. 14 Մայիս. — Իսլամաց Գուրպան Պայրամի առթիւ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ընկերակցութեամբ Գերշ. և Հոգշ. Միաբան Հարց, շնորհաւորական այցելութիւն տուաւ Քաղաքիս Վսեմ. Կառավարիչին, Վսեմ. Մուֆթիին, Ոստիկանապետին, Քաղաքապետին և Սէուտական Արաբիոյ Հիւպատոսին։

— Կէսօրէ վերջ, Անթիլիասէն չորս Վարդապետ Հայրեր հիւրաբար ժամանեցին Ս. Աթոռ։ Անոնցմէ Հոգշ. Տ. Գարեգին Վրդ. Սարգիսեան Դշ. 16 Մայիսի գիշերը յոյժ շահեկան բանախօսութիւն մը տուաւ Հ.Մ.Ը.Մ.ի Ակումբին մէջ, խօսելով երիտասարդութեան վերապահուած դըժուար՝ այլ վեհ ու կենսական դերի մասին, մանաւանդ Սփիւռքի ներկայ պայմաններուն մէջ։

● Գշ. 15 Մայիս. — Այսօր սկսան Ս. Թարգմանչաց Վարժարանի Ամավերջի Քննութիւնները, որոնք տևեցին մինչև ամսուն 24ը։

● Եշ. 21 Մայիս. — Քրիստոնեայ համայնքներու հետ յարաբերութիւն հաստատելու Մարմնի Քարտուղար Մօնս. Վիլլըրանս այցելեց Ս. Պատրիարք Հօր, բացատրութիւններ ու մանրամասնութիւններ տալու համար յառաջիկայ Հոկտեմբերին Վատիկանի մէջ գումարուելիք Համաժողովին մասին։

● Ուր. 25 Մայիս. — Յորդանանի Անկախութեան 16րդ տարեդարձի առթիւ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ի դիմաց Միաբանութեան և Յորդանանաբնակ հայութեան, շնորհաւորական հեռագիր մը յղեց Ամման՝ Վեհ. Թագաւորին։

● Շբ. 26 Մայիս. — Նոյն առթիւ, Պաշտպանութեան Նախարարին հրաւէրով, Դիւանապետ Հոգշ. Տ. Շահէ Վրդ. և Հոգշ. Տ. Գեղամ Աբղ. ներկայ եղան Խառն կոչուած բանակատեղւոյն մէջ, ի ներկայութեան Ն. Վեհ. Թագաւորին կատարուած զինուորական մեծ տողանցքին։

— Դարձեալ նոյն առթիւ, Գերշ. Լուսարարապետ Տ. Հայրիկ Եպս. և Հոգշ. Տ. Շահէ Վրդ. ներկայ եղան Պաշտպանութեան Նախարարին կողմէ, ի պատիւ Ն. Վեհ. Թագաւորին տրուած ճաշկերոյթին։

● Եշ. 31 Մայիս. — Իտալական ազգային տօնի առթիւ, Իտալական Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս., Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. և Տիար Կարապետ Հինդլեան։

## ՏԱՐՈՒԱՆ ՈՒԽՏԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Ս. Զատկի տօնին առիթով, Ս. Երուսաղէմ այս տարի ունեցաւ հոծ ուխտաւորութիւն։ Ըն Քաղաքի փողոցները շաբաթներով խճողուած մնացին բազմացեղ ուխտաւորներով, ինչպէս՝ Յոյներ, Ղպտիներ, Ասորիներ, Լիբանանցի Մարոնիթներ և այլն։ Անոնց կողքին, արհամարհելի չէր թիւը Հայ ուխտաւորներու — շուրջ 2000 —, եկած մեծ մասամբ դրացի արաբական երկիրներէն, ինչպէս նաև Իսթանպուլէն, Յունաստանէն ու հեռաւոր Ամերիկայէն։ Ս. Աթոռոյ Վարչութիւնը, Ուխտաւորաց Ընդունելութեան Յանձնախումբի մը միջոցաւ, իրենց բնակութեան յատկացուց վանքէն ներս տրամադրելի բոլոր սենեակները, ինչպէս նաև Ս. Թարգմանչաց և Ժառանգաւորաց վարժարաններէն մասեր։ Վրաններ լարուեցան նաև վերջինիս խաղավայրին վրայ։ Երուսաղէմ գտնուած իրենց մօտ կիսամսեայ ժամանակամիջոցին, ուխտաւորները ոչ միայն ներկայ եղան Աւագ Շաբթու և Ս. Զատկի եկեղեցական մեր հոգեպարար արարողութեանց, այլ և խմբովին և Վարդապետ Հայրերու առաջնորդութեամբ, այցելեցին Սուրբ Երկրի բոլոր կարևոր Սրբավայրերը, որոնց մասին ստացան հարկ եղած բացատրութիւնները։

Վստահ ենք թէ բոլոր ուխտաւորներն ալ հոգեպէս մխիթարուած ու լիացած, և առաւել ջերմեռանդ հաւատքով զրահուած վերադարձան իրենց տեղերը, քաղցր ու անջնջելի տպաւորութիւններ տանելով իրենց հետ միջազգային քրիստոնէութեան այս ոստանէն։

## ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ ԵՐՈՒՍԱՂԷՄ

29 Ապրիլ, Ս. Զատկի առաւօտուն, Իսթանպուլէն ուխտաւորաբար Ս. Քաղաք ժամանեց 30 երկսեռ անդամներէ բաղկացած Մամիկոնեան Երգչախումբը։ Կառախումբի անակնկալ յապաղում մը, դժբախտաբար, հնարաւորութիւն չըտուաւ որ Երգչախումբի անդամները մասնակցին Աւագ Եօթնեակի կրօնական մեր տպաւորիչ արարողութեանց։ Երգչախումբը երեք օրեր մնաց Երուսաղէմ, ու Ս. Զատկի երեկոյեան, Վանքի մեծ բակին մէջ կատարուած «Անդաստանին», ու մանաւանդ յաջորդ օրը՝ Մայր Տաճարի մէջ մատուցուած Պատրիարքական հանդիսաւոր Ս. Պատարագին բերաւ իր ձայնական շնորհը, տաւել փայլ մը տալով մեծաշուք այդ արարողութեանց։ Բոլոր ներկաներն ալ հիացումով ունկնդրեցին Ս. Պատարագի իրենց երգեցողութիւնները, հակառակ որ կ'երգէին Պոլսոյ մէջ ընդհանրապէս գործածուող և Ս. Աթոռոյս մէջ սովորաբար երգուած եղանակներէն մի քիչ տարբեր, բայց նոյնքան գողտր ու տոհմիկ դաշնաւորումով։

Եշ., 30 Ապրիլի երեկոյեան ժամը 8ին, Երգչախումբը, Տքթ. Տիգրան Մամիկոնեանի ղեկա-

digitised by A.R.A.R.@

վարութեամբ, հանդէս եկաւ Համերգով մը՝ Շմիթ Աղջկանց Վարժարանի սրահին մէջ։ Երեկոյթին յայտագիրը կը բաղկանար առաւելապէս ժողովրդական երգերէ, մեծաւ մասամբ անմահն Կոմիտասի և իր աշակերտներու ստեղծագործութիւններէն։ Մեներգիչ Օր. Ալիս Քիթապճեան իր չքնաղ ու գրաւիչ ձայնով հմայեց ունկնդիրները։ Հանդէսը կը հովանաւորէր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը։ Ներկայ էին Միաբան Հայրեր, մեծ թիւով ժողովուրդ և Զատկի առիթով Ս. Քաղաք գտնուող բազմաթիւ ուխտաւորներ։

Վստահ ենք թէ արդար եղած պիտի չըլլանք միայն գնահատանք արձանագրելով Մամիկոնեան Երգչախումբի այս ելոյթի մասին։ Վստահ ենք նաև թէ արուեստի նրբաճաշակ քննադատներ պիտի կրնային ըսել շատ աւելին և շատ աւելի նուրբ կերպով քան ինչ որ պիտի ուզէինք այս առիթով ըսել։

---

## ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՔ
## Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Ամէն տարի, դպրոցական տարւոյ վերջին շաբաթներուն, տեղի կ'ունենան Ս. Թարգմանչաց Երկրդ. Վարժարանի Դաշտահանդէսը Երգահանդէսը և Պազարը։ Իսկ քննութիւններու աւարտումէն ետք՝ Ամավերջի Հանդէսները։ Այս տարի, յիշեալ հանդիսութիւնները կատարուեցան իրենց սովորական ժամանակէն կանուխ, տրուած ըլլալով որ, կառավարական օրէնքի համաձայն, յետ այսու, դպրոցական տարեմուտը, աշուն և տարեփակը, պիտի կատարուին մէկ ամիս առաջ (Սեպտ.-Մայիս՝ դպրոցական տարեշրջան, Յունիս-Օգոստոս՝ արձակուրդ)։

### Ա.— ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Տեղի ունեցաւ 6 Մայիսի Կիրակի կէսօրէ վերջ ժամը 4ին, ծառանդաստանայ Վարժարանի մարզադաշտին վրայ, մասնակցութեամբ Վարժարանի աշակերտութեան, երկու սեռերէ, երկուքն ալ բաժնուած երկու խումբերու, առաջնորդութեամբ տղոց մարզիչ Պր. Միհրան Յակոբեանի և աղջկանց մարզիչ Օր. Շուշան Յովսէփեանի։ Դաշտահանդէսին կը նախագահէր Գերշ. Տ. Նորայր Եպս.։ Ներկայ էր մեծ թիւով ժողովուրդ։

Հանդէսին նոր և երկարատև յայտագիրը իրագործուեցաւ ուշագրաւ յաջողութեամբ։ Այս տարի, շնորհիւ մարզիչ ուսուցչին և իր օգնական Արմենակ Պասմաճեանի ջանքերուն, յայտագրին վրայ աւելցած էին կարգ մը նորութիւններ, ինչպէս՝ արգելարշաւ, գնդարձակում, զուարճախաղեր ևայլն, որոնք լաւագոյնս կը վկայէին Վարժարանի Տեսչութեան մեր մատաղ սերունդի իմացական ու բարոյական կրթութեան կողքին նաև ֆիզիքական կրթութեան հանդէպ ցոյց տուած հոգածութեան։

Դաշտահանդէսի աւարտին, Գերշ. Սրբազանը կատարեց մրցանակաբաշխութիւն վարձատրելով յաղթող մարզիկները բաժակներով ու մէտալներով։

### Բ.— ԵՐԳԱՀԱՆԴԷՍ

Տեղի ունեցաւ 12 Մայիսի Շաբաթ երեկոյեան ժամը 8ին ծառանդ. Վարժարանի հանդիսասրահին մէջ, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, ի ներկայութեան Հոգեշ. Հայրերու և ժողովուրդի ստուար բազմութեան։

Շուրջ երկու ժամեր տևող յայտագրի վրայ կային մեներգներ, խմբերգներ և դաշնամուրի նուագածութիւններ, ըստ բաւականին յաջող կերպով կատարուած Վարժարանի Երկրորդական բաժնի ուսանողութեան կողմէ, ղեկավարութեամբ Վարժարանի Երաժշտութեան ուսուցիչ Պր. Սահակ Գալայճեանի և մասնակցութեամբ Դաշնակահար Պր. Վաչէ Գալայճեանի։

Հանդէսը փակուեցաւ «Տէր, Կեցո» մաղթերգով։

### Գ.— «ՊԱԶԱՐ»

Տեղի ունեցաւ 26 և 27 Մայիս, Շաբաթ կէսօրէ վերջ և Կիրակի օրերուն Վարժարանի շէնքին մէջ բարձր հովանաւորութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր Շաբաթ երեկոյեան ժամերգութենէն ետք, Գերշ. Լուսարարապետ Տ. Հայրիկ Եպս. կատարեց բացումը Պազարին, ի ներկայութեան Միաբանութեան անդամներուն։

Ճոխօրէն զարդարուած Վարժարանի սրահին մէջ ցուցադրուած էին ուսանողուհիներու ձեռագործ ստեղծագործութիւնները և այլ վաճառելի օգտակար առարկաներ։ Պազարը ունէր նմանապէս ճաշերու, զովացուցիչներու և խաղերու բաժիններ։

Շաբաթ և Կիրակի օրերը յաջորդաբար աշակերտներու ծնողքներն ու բազմաթիւ ժողովուրդ այցելեցին Վարժարան բարոյական քաջալերանքին հետ բերելով նաև իրենց նիւթական մասնակցութիւնը Վարժարանին ու անով՝ Ս. Աթոռոյս կրթական գործին։

Լուսարարապետ Սրբազանն ու Միաբանութիւնը Վարժարանին զանազան մասերը այցելելէ ետք պատասխանատուներուն գովասանքով և իրենց գնահատանքի խօսքը ըրին Վարժարանի առժ. Տեսուչ Հոգշ. Տ. Փառէն Արքեպսին և յարգոյ ուսուցչական կազմին, որոնք ոչ մէկ ջանք խնայած էին արդիւնաւոր և յաջող դարձնելու համար սոյն Պազարը։

### Դ.— ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ
### ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԲԱԺՆԻՆ

Տեղի ունեցաւ Կիրակի, 3 Յունիսի կէսօրէ վերջ ժամը 4ին, ծառանդ. Վարժարանի հանդիսասրահին մէջ, նախագահութեամբ Գերշ. Տ. Նորայր Եպս. Պօղարեանի և ի ներկայութեան Միաբան Հարց և ստուարաթիւ ժողովուրդի։

Մէկ ու կէս ժամեր տևող այս Հանդէսի յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին Մանկապարտէզի երեք դասարանները՝ ինչպէս նաև Նախակրթարանի Ա. դասարանի երկսեռ փոքրիկները, արտասանութիւններով, պարերով, մարզանքներով, խմբերգներով և տրամախօսութիւններով, որոնց յաջող կատարումը մեծագոյն գրաւականն է Մանկապար-

digitised by A.R.A.R.@

տէջի ուսուցչուհիներուն տարուան մը կրթանուէր աշխատանքներուն։

Հանդէսի աւարտին, Ծաղիկ դասարանի ընթացաւարտ 19 փոքրիկները ստացան իրենց վկայականները Գերշ. Ս. Հօրմէն, որ օրհնեց զիրենք ու «Պահպանիչ»ով փակեց Հանդէսը։

### Ե.— ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲԱԺՆԻՆ

Տեղի ունեցաւ յաջորդ Կիրակի, 10 Յունիսի երեկոյեան ժամը 7ին, Ժառանգաւորաց Վարժարանի գեղակերտ հանդիսասրահին մէջ, նախագահութեամբ Լուսարարապետ և Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեանի և ի ներկայութեան Միաբանութեան անդամներուն և ծնողներու ու հրաւիրեալներու կոկիկ բազմութեան։

Հանդէսը բացուեցաւ Վարժարանի երկսեռ Երգչախումբին կողմէ երգուած Արքայական Քայլերգով և Հայրապետական Մաղթերգով։ Ապա իրագործուեցաւ երկու մասերէ բաղկացած և աւելի քան երկու ժամեր տեւող յայտագիր մը, որուն առաջին մասը կը բաղկանար շրջանաւարտ դասարանի աշակերտներուն կողմէ կատարուած ատենախօսութիւններէ և ուղերձներէ՝ Հայերէն, Արաբերէն և Անգլերէն լեզուներով, ինչպէս նաև խմբերգներէ ու մեներգներէ։ Յայտագրին Բ. մասը սկսաւ Վարժարանի տեսչ. Տեառն Հոգշ. Տ. Փառէն Աբղ.ի Տարեկան Տեղեկագրի ընթերցումով (որ պիտի երևի «Սիոն»ի յաջորդ թիւով)։ Ապա երգուեցաւ հրաժեշտի յուզիչ երգը։ Յայտագրի աւարտին, Գերշ. Սրբազանը բաժնեց 6 շրջանաւարտներուն վկայականները ու յառաջադէմ աշակերտներուն մրցանակ-գիրքերը, ու փակեց Հանդէսը իր յոյժ տպաւորիչ խրատականով։

## ՅԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈՅԹՆԵՐ
### ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ 47րդ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

Այս տարի, Մայրավանքէն ներս գործող բոլոր Միութիւնները հանդիսաւորապէս նշեցին Ապրիլեան Եղեռնի տարեդարձը, կազմակերպելով յիշատակի հանդիսութիւններ, բոլորն ալ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, ի ներկայութեան Միաբան Հայրց և տեղացի ինչպէս ուխտաւոր հանդիսականներու պատկառելի բազմութեան։ Ստորև կու տանք ամփոփ նկարագրականը յիշատակի այդ երեկոյթներուն։

### Ա.— Հ. Մ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ

Հայ Մարմնակրթական Ընդհ. Միութեան Երուսաղէմի Մասնաճիւղին յիշատակի երեկոյթը կայացաւ Ապրիլեան Եղեռնի ճիշդ 47րդ տարեդարձին օրը, Աւագ Երեքշաբթի, 24 Ապրիլի գիշերուան ժամը 8ին, Միութեան ակումբին մէջ։ Խնամեալ ու հոծ յայտագրի մը իրագործումէն ետք, բեմ բարձրացաւ օրուան բանախօսը՝ Հոգշ. Տ. Շահէ Վրդ. Աճէմեան, որ ազդու ատենաբանութեամբ մը վեր առաւ մեր մէկ միլիոն նահատակներուն ի խնդիր սրբազան ու վսեմ գաղափարի մը մարտիրոսանալու համբուրելի ոգին։ Հանդէսը վերջացաւ Ս. Պատրիարք Հօր խրատական-փակման խօսքով, որ յորդորեց նոր սերունդը փոխադարձ համակրութեամբ մտնել իրարու ու լայնախոհութեամբ լուծել իրենց միջև ծագած հարցերը, առաջքը առնելու համար նոր Ապրիլ 24ի մը՝ որ ոչ նուազ ահաւոր ուժգնութեամբ կը սպառնայ այսօր մեր ցեղային գոյութեան։

### Բ.— Հ. Ե. ՄԻՈՒԹԻՒՆ

Տեղւոյս Հայ Երիտասարդաց Միութեան յիշատակի երեկոյթը տեղի ունեցաւ յաջորդ գիշեր, Աւագ Չորեքշաբթի, 25 Ապրիլի ժամը 8ին, Միութեան սրահին մէջ։ Իրագործուեցաւ ընթերցանութիւններէ, արտասանութիւններէ և օրուան պատշաճ երգերէ բաղկացած կոկիկ յայտագիր մը։ Օրուան բանախօսներն էին Պէյրութէն ուխտաւորաբար Ս. Քաղաք գտնուող Տիար Օննիկ Սարգիսեան և Տիար Յովհաննէս Թաշճեան, որոնք հանգամանօրէն ներկայացուցին Ապրիլեան Եղեռնին տուն տուող պատճառները ու վեր առին Հայուն ազատատենչութեան ոգին՝ որ կրցաւ բռնութեան ամէնէն բիրտ շղթաները խորտակելու պահանջատէր կամքը ներշնչել մեր ժողովուրդին։ Հանդէսը փակուեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր խրատականով, որ դարձեալ իր խօսքը մանաւորելով օտար ափերու վրայ հասակ նետած մեր նոր սերունդին, յորդորեց ըլլալ զգաստ և զգօն, շրջահայեցութեամբ և աշխոյժութեամբ վարելու համար ղեկը մեր ազգային կեանքին, մինչև որ երջանիկ օր մը հասնինք նուաճման մեր փրկութեան։

### Գ.— Ս. Թ. ՇՐՋ. ՄԻՈՒԹԻՒՆ

27 Ապրիլ, Աւագ Ուրբաթ գիշերուան ժամը 8ին, Ս. Թարգմանչաց Վարժարանի Շրջանաւարտից Միութիւնն ալ իր յարգանքի տուրքը բերաւ Ապրիլեան զոհերու յիշատակին, Գիւլպէնկեան Մատենադարանի սրահին մէջ սարքած իր սգահանդէսով։ Օրուան խորհուրդին հետ առընչուած արտասանութիւններու, մեներգներու, խմբերգներու և ընթերցումներու ընթացքին, Հոգշ. Տ. Շահէ Վրդ. կուռ բանախօսութեամբ մը զրուցեց յիշատակը մեր նահատակներուն, տալով նաև անոնց պատգամը նոր սերունդին։ Հանդէսի աւարտին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ըրաւ փակման խօսքը, յայտնելով թէ այս օրը սուգի և լացի օր մը ըլլալէ աւելի պէտք է ըլլայ տօն մը՝ նորոգելու հաւատարմութեան մեր ուխտը հանդէպ մեր ազգային սրբութեանց՝ որոնց անմեռ պաշտպանումին համար իրենց կեանքերը [illegible] ազատութիւնը ունեցան տարագրութեան ճամբաներուն վրայ ինկած մեր նահատակները՝

digitised by A.R.A.R.@